
**«ԱՂՎԵՍ» ՏՈՏԵՄԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԱՐՄԱՏՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ
ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍՈՒՄ**

ՏԻԳՐԱՆՅԱՆ Մ. Ա.

Կենդանապաշտական պատկերացումները հատուկ են հնագույն ժողովուրդներին, ներառյալ՝ հայերին: Կենդանական և բուսական աշխարհը հնուց ի վեր եղել է մարդկության գոյության գլխավոր աղբյուրը: Բնական է, որ բուսական և կենդանական աշխարհը պետք է վիթխարի տեղ գրավեր մարդկանց գիտակցության, ընդհանուր պատկերացումների և աշխարհընկալման մեջ:

Տոտեմիզմի¹ հետ կապվող մոտիվների հիմքում եղել են շրջակա միջավայրում գոյություն ունեցած կենդանիները: Ա. Մնացականյանը գրում է. «...յուրաքանչյուր ժողովրդի պատկերացումների և նրանց դրսևորումների մեջ տեղ գտած կենդանիները, ամենից առաջ պիտի առնված լինեին հենց այդ ժողովրդի և նրա նախորդների շրջապատից, նրա հայրենի բնաշխարհից»²:

Կենդանապաշտական պատկերացումները ծնվել են տոհմատիրական կարգերում, և տոտեմիզմի նախնական դրսևորումները կապված են ոչ թե կրոնական հավատալիքների կամ կախարդական-հմայական ծիսակատարությունների, այլ **ամուսնական գործառույթի կարգավորման հետ**³:

Հին ժողովուրդների ծիսական տոնակարգերում բացառիկ դեր ու նշանակություն է ունեցել **աղվեսը**, որը, լինելով տոտեմ կենդանի, մեծարվել և պաշտամունքի է արժանացել: Ուրարտական գլանակնիքներից մեկի վրա ներկայացված է մի տեսարան, որտեղ «Կենաց ծառը» սպասարկում է աղվեսի կերպարանքով քրմապետը⁴: Աղվեսի մորթին կրում էին հին հույները պտղաբերության աստված Դիոնիսոսին երկրպագելիս, հին հռոմեացի կանայք իրենց թներին, որպես հարդարանք, կրում էին աղվեսի պոչ, իբրև տղամարդկանց հրապուրելու միջոց⁵: Ճապոնիայում, հողագործության և պտղաբերության հետ կապված, բրնձի աստված Ինարին նվիրված սրբատեղիներում կանգնեցնում էին փայտից կամ քարից կերտած աղվեսի արձաններ՝ երախներում սրբազան տեքստերով գլաններ կամ դրախտի բանալիներ, իսկ

¹ «Տոտեմ» բառն առաջացել է հյուսիսամերիկյան օջիվե հնդկացիների «ototeman» բառից, որը թարգմանվում է՝ «նրա ցեղը»:

² Մնացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Ե., 1955, էջ 255:

³ Винников И. Из архива Льюиса Генри Моргана, М.-Л., 1935, с. 183-185.

⁴ Пиотровский Б. История и культура Урарту, Е., 1944, с. 318, рис. 103.

⁵ Մանասյան Գ., Խորհրդանշանների բառարան, Ե., 2007, էջ 89-90:

պոչի ծայրը խորհրդանշում էր «երջանկության գանձը»⁶: Հին աշխարհում ասույնները համարվում էին «երկնային աղվեսներ»: Չինական ավանդազրույցներում Կուլի աղվեսը զուգորդվում էր երկարակեցության հետ⁷, իսկ մի հին չինական ժողովրդա-կան ասացվածքի համաձայն՝ «Որտեղ աղվես չկա, այնտեղ գյուղ չի լինի»:

Հայկական հարսանիքի գործող կարևոր անձերից էր «աղվեսը»՝ և՛ որպես «խաբար բերող բարի սուրհանդակ», և՛ որպես հարս տանող գլխավոր ուժերից մեկը: «Աղվես աղբորը» սովորաբար ընտրում էին ազապներից, որը պիտի լիներ ճարպիկ, հնարամիտ և խորամանկ: Դժվարությունները հաղթահարելով՝ նա պետք է առաջինը հասներ հարսի տուն, ընդ որում ծածուկ, որպեսզի նրան ոչ ոք չնկատեր և խնամիներին տեղեկացներ հարսնատի գալու մասին: Եթե հարսի համագյուղացիները «աղվես ախպորը» նախապես նկատեին, հատկապես կտրիճները, ապա նրան կբռնեին ու մի լավ «կդնգատեին», վրան հող ու ցին կնետեին և խայտառակ անելով՝ դուրս կվռնդեին: Հակառակ դեպքում «աղվես ախպորը» պարզնաստրում էին. նա կարող էր հարսի հորանց հավերի հետևից «ընկնել» և սրտի ուզածի չափ բռնել: Երբեմն «որս» անելով՝ «աղվեսը» կարող էր չափն անցնել և ավելի շատ հավ «խեղդել», քան դրա պահանջը կար, սակայն ոչ ոք իրավունք չուներ դժգոհություն հայտնելու և ընդդիմանալու: Այդ հավերը «աղվես ախպերը» պիտի մակարների հետ ուտեր հարսանիքից հետո կազմակերպած «թագվորաորս» կոչված հավաքույթի ժամանակ⁸:

Որոշ վայրերում «հարսի ձիու թամբի բարձր աղվեսն էր դնում», ինչպես նաև փեսայի՝ գյուղին մոտենալուն պես հարսի տակից այդ նույն բարձր հանում և դնում էր «թագվորի ոտաց տակը»: Իր պաշտոնը լավ կատարելու համար «աղվեսի ձիու» վզից թագվորի հրամանով թաշկինակ կամ սրբիչ էին կախում, իսկ աղվեսին գուլպա նվիրում⁹:

Դարալագյազի հայերի մեջ, երբ հարսնատի թափորը դեպի փեսացուի տուն էր վերադառնում, հարսի օժիտի ծիսական կապոցը՝ «նանը գոշտը»¹⁰, աղվեսն էր տանում, որին ընդառաջ դուրս էր գալիս կտրիճներից մեկը և առաջարկում աղվեսին մենամարտել կամ էլ, որպես տույժ, մի գավաթ գինի հյուրասիրել¹¹:

⁶ Мифы народов мира. Энциклопедия, т. 1, М., 1987, с. 511-512.

⁷ Երբ աղվեսը բորբորում է իր 50 տարին, վերածվում է կնոջ, 100-ը՝ երիտասարդ աղջկա, իսկ 1000-ը՝ «տյեն-խու» երկնային աղվեսի և ձեռք բերում 9 պոչ:

⁸ Լալայան Ե., Ազգագրական հանդէս, 7 և 8 գ., Թիֆլիս, 1901, էջ 187:

⁹ Լալայան Ե., Ազգագրական հանդէս, 5 և 6 գ., Թիֆլիս, 1899, էջ 102:

¹⁰ «Նան»՝ հաց, «գոշտ»՝ միս – հարսնատի տան համար խոստացած «նյութեղենը», որը պատրաստում էին ուրբաթ երեկոյան: Ի դեպ, «նանը գոշտի» հետ էին տանում նաև քավորկնոջ պատրաստած հինան:

¹¹ Լալայան Ե., Ազգագրական հանդէս, 7 և 8 գ., էջ 157:

Հին Եգիպտոսում եղել է հատուկ տոն, որը կոչվել է «Խեբ-Սեդ»՝ պոչի տոն, որը մեծ ճոխությամբ նշում էին փարավոնի կառավարման XIII տարում: Փարավոն-արքայի տոնական հանդերձանքի պարտադիր հարդարանքն էր **կենդանու պոչը**, որին հետագայում փոխարինեց «ջեդը»: Այդ գաղտնաձիսությունը նշանավորում էր «նորելուկ» փարավոնի առնական ուժի վերականգնումը, որն էլ, ըստ էության, խորհրդանշում էր պտղաբերություն¹²: Հին Հայաստանում մայիսի 7-ին ժողովրդական հանդեսներ էին տեղի ունենում կապված պտղաբերության հետ, և այդ օրը բավական մեծ դեր ունեին «պոչավոր պառավները»¹³, այսինքն՝ դերակատար կանայք հանդես էին գալիս աղվեսի երկար արհեստական պոչերով: Գանձակի գավառի Բանանց, Բրաջուր և այլ գյուղերում մեկ կամ երկու ծաղրածու, մուշտակները թարս հագնելով և երեսներին դիմակ դնելով, պոչեր էին կապնում և, հարսնետորների առաջն ընկած, բոլորին ծիծաղեցնելով, «հազար ու մի ծամածռություններ, հանաքներ էին անում»: Սրանք կոչվում էին «օյին» և «օյնա-ձուտ»¹⁴: Նման սովորույթ կար սասունցիների մեջ, որտեղ «աղվեսները» սովորաբար երկուսն էին: Աղձնիքում «աղվեսները» ծպտվում էին ոչխարի, աղվեսի, գայլի մորթիներով՝ ցախավել կապելով «մորթու» պոչից¹⁵:

Հայ ժողովրդի հնագույն պատկերացումներում աղվեսը ավետիս բերող էր և խորհրդանշում էր բարություն, ուժ և հաջողություն: Գանձակում «...ճանապարհորդութեան ժամանակ աղուէս տեսնելը բախտավորութեան, իսկ գայլ տեսնելը դժբախտութեան գուշակ է համարում, ուստի և ընդառաջ եկող մակարները սրան «աղուէս, աղուէս» են բղաւում...»¹⁶: Բուլանխում «կոնակի տակ» սև աղվեսի մորթին պահելը հաջողության և բախտավորության միջոց էր: Ըստ հին մատյանների՝ աղվեսի մորթին սեռական անկարողության դեմ բուժամիջոց էր¹⁷: «Սասնա ծոեր» էպոսում Փոքր Մհերին հենց աղվեսն է ցույց տալիս ճանապարհը դեպի բարձր լեռան գագաթը:

Մենք չենք կարող ասել, թե որքան հին է աղվեսի պաշտամունքը, սակայն «լուր հասցնող» աղվեսի կերպարին, որը միննույն ժամանակ «բնության արարման» ծեսի մասնակից է՝ հանդիպում ենք դեռևս շումերական դիցաբանական գրույցներում՝ Էնկի աստծու և Դիլմուն¹⁸ դրախտային երկրի արարման պոեմում: **Էնկին** (արքայ.՝

¹² Кролл А. Египет первых фараонов, М., 2005, с. 47-75.

¹³ Լալայան Ե., Ազգագրական հանդես, 2 գ., Թիֆլիս, 1897, էջ 60, 275:

¹⁴ Լալայան Ե., Ազգագրական հանդես, 6 գ., Թիֆլիս, 1899, էջ 262:

¹⁵ Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի հարսանեկան շարքի ավանդական որոշ սովորույթների ու ծեսերի մասին (Էջմիածին, հ. 9, 2005, էջ 70):

¹⁶ Նույն տեղում, էջ 263:

¹⁷ Նույն տեղում, էջ 41:

¹⁸ Դիլմուն առասպելական երկրի աշխարհագրական դիրքը վերջնականապես ստուգարանված չէ, սակայն գիտնականները հակված են այն նույնացնելու ներկայիս Բախրեյնի հետ: «Էնկին և Նինիուրսագր»

Հայա), շումերների չորս գլխավոր աստվածներից մեկը, որը վերին և ստորին աշխարհների քաղցրահամ ջրերի տիրակալն էր, արեգակը շարժող **Ութու** աստծուն (աքքադ.՝ Շամաշ) հրամայում է Դիլմունը լցնել քաղցրահամ ջրերով: Այդպես Դիլմունը դառնում է բերրի հողերով, պտղատու այգիներով և արոտավայրերով հարուստ դրախտային երկիր, ուր աստվածների մայր Նինխուրսագը (աքքադ.՝ Նինտու), որն իմաստավորում էր Մայր-Հողը, բարդ աղոթքներով¹⁹ ութ սրբազան բույս է աճեցնում: Էնկին իր մունետիկ աստված երկդեմ (двуликий) Իզիմուդին ուղարկում է, որ նա պոկի և բերի այդ «մրգերը»: Երբ Էնկին մեկը մյուսի հետևից ուտում է այդ ութ²⁰ պտուղները, զայրացած Նինխուրսագը անիծում է նրան և հեռանում: Էնկիի ութ օրգանները ախտահարվում են, և նա ծանր հիվանդանում է: Բոլոր աստվածները, անձար ու մոլորված, գլխներին ավագ ու մոխիր թափելով, փոշու մեջ նստած աղոթք են անում, և այդ պահին նրանց դիմում է **ադվեսը**: Լավ վարձատրություն ստանալու պայմանով նա խոստանում է լուր տանել Նինխուրսագին և օգնություն խնդրել: Ադվեսի խոսքերի տեքստը, ցավոք, չի պահպանվել (կավե արձանագրության այդ հատվածը կոտրված է), այնուամենայնիվ, նրան հաջողվում է վերադարձնել Նինխուրսագին²¹, որն էլ բուժում է Էնկիին²²:

Ուշագրավ է, որ շումերենում ադվեսը երկակի անվանում ունի. *ka-a*՝ սովորական ադվես, և *su-din*՝ «թռչող»²³ ադվես, աքքադերենում՝ *su-te-en*, *suten*, որից էլ անկասկած սերվում է հայերեն «սուտ» բառը: Աճառյանը **սուտ-ը**, «բնիկ հայ բառ» համարելով

շումերական էպոսում (մ.թ.ա. III հազ.) Դիլմունը («մարուր», «անարատ», «լուսավոր») հիշատակվում էր, որպես դրախտային երկիր, որտեղ չկար մահ, հիվանդություն, և կյանքը հավերժ էր: Մակայն քաղցրահամ ջրի պակասությունից խիստ տուժել էին կենդանական և բուսական աշխարհները:

¹⁹ Այդ սրբազան աղոթքները կատարել են աստվածների երեք սերունդ շարունակ:

²⁰ **Ութը** սրբազան թիվ է համարվել Հին Արևելքի գրեթե բոլոր երկրներում: Ութի երկու շրջանը խորհրդանշում են երկնային և երկրային աշխարհները: Հորիզոնական դիրքում 8-ը անսահմանության նշանն է (лемниската): Հին հույներն այն համարում էին արդարության և արդարադատության թիվ: Հին եգիպտացիներն **օգրադան** (չորս զույգ աստվածները) սրբացնում էին՝ 8-ը կապելով խոսքի և մտքի, իմաստության, գրչության, տարեգրության և թվագրության (летоисчисление) աստված Տոտի անվան հետ: Ութը համարվում էր տիեզերական կանոնակարգի և արարման թիվը, այդ իսկ պատճառով քրիստոնեության մեջ վերաիմաստավորվելով դառնում է Հիսուսի խորհրդանիշ-թիվ (յոթ օրվա արարումն ամրապնդել և հաստատել 8-րդ օրվա խորհրդով), մկրտարանները (баптистерии), որպես կանոն, ութանկյուն են, ութ ձայն է հոգևոր երաժշտության համակարգը և այլն:

²¹ Նինխուրսագը ծնում է ութ աստված՝ ախտահարված օրգանների թվին համապատասխան: Յուրաքանչյուր աստված, բուժելով համապատասխան օրգանը, աստիճանաբար վերակենդանացնում է Էնկիին:

²² **Kramer S.** *Mythologies of the Ancient World*, New York, 1961 (*Мифология древнего мира*, пер. В. А. Якобсона, М., 1977, с. 128).

²³ «Թռչող»՝ հավանաբար «արագավագ, սրընթաց» իմաստով:

(հիշատակում է հնդեվրոպական նախալեզվի՝ *pseudo* ձևը), նշում է, որ այլ լեզուներում այդ հնագույն արմատը պահպանված չէ²⁴:

Ինչպես տեսնում ենք, Հայոց հարսանեկան ծեսում դեռևս հնագույն ժամանակներից եկած **աղվես** տոտեմի հանդես գալը կրոնապաշտամունքային ժառանգություն է:

Աղվես տոտեմի հեթանոսության շրջանի «մեծարանքը» քրիստոնեության ժամանակաշրջանում կտրուկ փոփոխությունների է ենթարկվում: Բացահայտ հակաքրիստոնեական խորհրդանիշ համարելով՝ եկեղեցին **աղվեսին** «հոչակում է» վտարակ և հերձվածող: Հին և Նոր Կտակարաններում աղվեսը ձեռք է բերում բազմաթիվ բացասական հատկանիշներ՝ խորամանկություն, շողոքորթություն, կեղծավորություն, խաբերայություն, ստորություն և այլն:

Դատավորաց գրքում աղվեսը հանդես է գալիս իբրև այգիներին և բերքին չարիք հասցնող կենդանի. «Եւ Սամփսոնը գնաց երեք հարիւր աղուէս բռնեց, եւ ջահեր առաւ, ու ազի ազիի դարձրեց եւ երկու ազիների մէջտեղը մէկ ջահ դրաւ: Եւ ջահերը կրակով վառեց, եւ նորանց քշեց փղշտացիների հունձքերի մէջ, եւ դիզուած եւ չ'կտրուած հունձքերը եւ մինչեւ անգամ այգիները՝ ձիթենիները այրեց» (Դատ. XV, 4-6):

Աստվածաշնչում, հանդիմանալով Հուդայի թագավոր Հերովդեսին (ԼԲՏՊ), Հիսուսը նրան անվանում է «աղուէս» (Ղուկ. XIII, 32): Ուշագրավ տողեր կարդում ենք Երգ Երգոցում՝ «Սիրեալի փափաքը դէպի իր սիրողը» գլխում, երբ «խորհրդավոր փեսան» (ըստ էության՝ Հիսուսը), դիմելով իր «սիրեցեալին», հետևյալ համեմատություններն է անում. «սարօնի ծաղիկ», «հովիտների շուշան», «անտառի խնձորենի», «այծեամի եւ եղնիկի ձագ», «թզենու ծաղկած որթ», ապա ավելացնում. «Բռնեցէք մեզ համար աղուէսները, այգիներն աւերող պզտիկ աղուէսները, որովհետեւ մեր այգիները ծաղկել են» (Երգ Երգոց, II, 15): Եթե Տիրոջ այս խոսքերը աղերսվում են Դատավորաց գրքում հիշատակվող Սամսոնի պատմության հետ, ապա Երգ Երգոցում աղվեսը կրկին հանդես է գալիս որպես չարիք հասցնող կենդանի:

Ինչպես ամբողջ քրիստոնեական աշխարհը, այնպես էլ Առաքելական եկեղեցին նույնպես աղվեսի նկատմամբ ունեցել է խիստ բացասական վերաբերմունք: Հայկական միջնադարյան գրականության մեջ աղվեսի կերպարը ցայտուն արտահայտվել է «Աղվեսագրքում», որը ժողովրդական բանահյուսությունից և գրավոր աղբյուրներից քաղված գրույցների, հետաքրքրաշարժ պատմությունների և առակների ժողովածու է²⁵: Անվերապահ լինելու համար եկեղեցու գաղափարական

²⁴ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979, էջ 253:

²⁵ «Աղվեսագիրքը» սովորաբար վերագրվում է Վարդան Այգեկցուն (XII-XIII դդ.): «Աղվեսագիրք» անվանումով այդ ժողովածուն տարածվել է XVII դարից, Ոսկան Երևանցու հրատարակությունից հետո (1668 թ.):

հակառակորդների՝ **թոնդրակեցի-ների**²⁶ ճակատներն ու երեսները խարանուս էին հատուկ «աղվեսադրոշմներով»: Աղթարքներին²⁷ հիշատակելիս Ալիշանը թվարկում է մի շարք հիվանդություններ և ցավեր (մեկ անունով կոչվել է **գան**), որոնց թվում էր նաև **աղվեսակ** կոչված ախտը²⁸:

Ինչն է պատճառը, որ հեթանոս ժամանակաշրջանում աղվեսը պաշտվել և մեծարվել է՝ «խորհուրդ բռնել աստվածների հետ», «Կենաց ծառին սրբազան խունկ մատուցել», «բարի լուր ավետող սուրհանդակ եղել», «պտղաբերության խորհրդանիշ հանդիսացել», իսկ քրիստոնեության ժամանակաշրջանում դարձել խիստ բացասական «հերոս»: Աղվեսի տոտեմի վերախմաստավորման մեջ կարելի է միտում փնտրել. պատճառը կրոնափոխության հայացքների բախումն է, սակայն գիտնականների մի մասը կարծում է, որ դարեր առաջ տեղի է ունեցել թարգմանչական «սխալ», քանզի Աստվածաշնչում հիշատակվող աղվեսն ի սկզբանե եղել է **շնագայլ**²⁹: Բանն այն է, որ հյուսիսային և կենտրոնական Եվրոպայում **շնագայլ** (ՔՈՍՈս) առհասարակ չի բնակվել, ուստի այդ տարածաշրջանի ժողովուրդների համար **շնագայլների**³⁰

²⁶ Թոնդրակեցիները քրիստոնյա աղանդավորներ էին Հայաստանում և Բյուզանդիայում (IX-XI դդ.): Հիմնադիրն էր Սմբատ Զարեհավանցին՝ Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Թոնդրակ գյուղից: Թոնդրակեցիների խոշորագույն կենտրոններից էր Մանանադին՝ պավլիկյանների հայրենիքը: Ժամանակակիցները նրանց համարել են վերստին ասպարեզ իջած պավլիկյաններ և նրանց գաղափարների ուղղակի ժառանգորդներ: Գր. Մազիսարոսը վկայում է, որ նրանք իրենց համարել են հայ քրիստոնյաներ, սակայն հիմնականում նշվում է, որ թոնդրակեցիներն ունեցել են եկեղեցու հեղինակությունն ու կարգերը մերժող հայացքներ: Նրանք հալածվել և ենթարկվել են դաժան ճնշումների:

²⁷ Աղթարք, ախտարք (պահլ. axtar «աստղ») անվանել են աստղագետներին, որոնք գուշակում էին մարդկանց ճակատագիրը:

²⁸ Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը (Հին հաւատք հայոց, Վենետիկ, 1895, արևելահայերեն թարգմանությունը՝ Բարսեղյան Վ. Գ.), Ե., 2002, էջ 205:

²⁹ Եզեկիելի մարգարեության գրքում «Երուսաղեմի մեղքերը եւ պատիժները» գլխում կարդում ենք. «նորա [Բւրայելի] իշխանները նորա [Երուսաղեմի] միջումը **գայլերի** պէս աւար են յափըշտակում, արիւն թափելու՝ հոգիներ կորցնելու համար, որպէս զի ազահութեամբ քաշեն» (Եզեկիել XXI, 27): Այստեղ հիշատակվող «Բւրայելի իշխանները»՝ Բենիամինի տոհմը (Вениаминово колено), ի սկզբանե համեմատվել է ոչ թե գայլերի, այլ **շնագայլերի** հետ, որոնց հին հրեաներն անվանել են «ոռնոցի որդիներ» (сыны воля): Այդ մասին է վկայում Մարգարեությունների գրքի XI դ. լատիներեն թարգմանությունը, որի տեքստում դեռ պահպանված է եղել «**շնագայլ**» տարբերակը:

³⁰ Թե որքան են հին հայերը պաշտել և պատիվ մատուցել **շանը**, վերջնական գնահատական դժվար է տալ, քանզի տվյալները հակասական են: Երկնքի հաստատության մեջ Հայկի (Orion) համաստեղության Ադրահետ (Adaher՝ հրագիսակ, հուր-հեր) մեծ և ամենապայծառ աստղը, որը կոչվել է **Միդիուս**, հայերեն անվանվել է **Շնիկ** աստղ (եզիպտացիների Սոթիս կոչվածն է, որից էլ Սոթիական շրջանը, ինչը մեզանում կրում է Շրջան Հայկին անունը): Օրիոն որսորդն ունի երկու շուն՝ Մեծ և Փոքր, որոնց վզկապները բռնում է ձեռքով, իսկ հանրահայտ երեք պայծառ երկնագույն աստղերը, որոնք կոչվում են Օրիոնի գոտի, հայերն

ընտանիքին պատկանող այդ կենդանին անհայտ էր: Գերմանա-սլավոնական ժողովուրդների համար Սուրբ գիրքը թարգմանելիս «անձանոթ» շնագայլը փոխարինվեց շնագզինների ընտանիքին պատկանող մեկ ուրիշ տեսակով՝ աղվեսով, որը եվրոպացիներին լավ հայտնի էր: Հետևաբար աղվեսը ժառանգեց շնագայլի³¹ բոլոր բացասական հատկությունները:

Պետք է նշել, որ «աստվածաշնչյան ժամանակների» շնագայլը, այսինքն՝ եգիպտական շնագայլը, ճանաչված էր նաև աֆրիկյան գայլ անունով: Բնականաբար, այն մեզ հայտնի մոխրագույն գայլը չէ, այլ շնագզինների մեկ ուրիշ տեսակ՝ երկարոտն, նրբիրան, սրաքիթ, երկար ցցված ականջներով և կախ ընկած երկարավուն աղվեսական պոչով, որին հին եգիպտացիներն անվանել են «sa`b» (սէր) և պաշտել որպես Ուպուաթ և Անուբիս աստվածներ³²:

«Ծաղկած» աղվեսներ



Ավետարան,
Ապահունիք, 1321 թ.



Ավետարան,
Եղվարդ, 1318 թ.



Ավետարան,
Ապահունիք, 1321 թ.

անվանել են Շամփուրք Հայկին (շամփուր՝ միս խորովելու մետաղաձող, նաև գենք և սպանության սլաք, շամփրակ՝ պսակ): Սակայն չնոռանանք, որ Հայկն իր ոտիս Բելին և նրա գորքը ևս կոչեց շուն:

³¹ Անհրաժեշտ է նշել, որ շուն-գայլ-շնագայլ տոտեմը Հին աշխարհում կապված է եղել ստորերկրյա թագավորության՝ մեռյալների անդրժիբիսյան աշխարհի հետ, որտեղ շնագզինները հանդես են եկել միջնորդի, հսկողի և պահապանի դերում (Անուբիս, Ուպուաթ, Սաք, Յերբեր, Արալեզներ և այլն):

³² Արաբական գայլը ամենակեր գիշատիչ է, որսի է դուրս գալիս գիշերը, սնվում է նաև կենդանիների դիակներով: Յերեկում է քարանձավների և դամբարանների հովում: Հավանաբար, գերեզմաններ փորելու սովորության համաձայն, եգիպտական չախկալ-Անուբիսը գուգորդվել է մահվան և մեռյալների աշխարհի հետ:

Բնչնիցե, գայլ-շնագայլ-աղվես թարգմանչական այս «փոխակերպումը» իր անդառնալի հետևանքներն ունեցավ զինանշագիտության (геральдика) մեջ: Աղվեսը պատկերված է եղել մի շարք ժողովուրդների զինանշանների վրա և դարեր շարունակ հանդիսացել գլխավոր խորհրդանիշ: Մակայն քրիստոնեության մեջ արևմտաեվրոպական կաթոլիկության «մամուլը» հետագայում խստիվ արգելել է աղվեսի պատկերումը հերալդիկայում՝ աղվեսին հռչակելով հակաաստվածաշնչյան կենդանապատկեր³³:

Որքան էլ որ ծանր «բաժին էր ընկել» աղվեսին, միննույն է, հեթանոս արմատներն առավել ուժեղ էին, և, հաղթահարելով եկեղեցական կղերականների հալածանքը, աղվեսի պաշտամունքը շարունակվեց՝ խոր դրսևորումներ ստանալով հայոց հարսանեկան ծեսում և ժողովրդական բանահյուսության մեջ:

Մատենադարանում պահպանվող ձեռագրերից մեկում³⁴ ներկայացված է հնագույն ժողովրդական երգ՝ «Սիրուն աղվես, ազին ծաղիկ» կրկնակով.

Տաղ ուրախութեան ի վերայ աղուեսին³⁵

Աղուեսն կու գայր ի լեռնէն ի վայր
Եւ գայր, իջրուր երդիքն ի վայր.
-Բնձ մեծ-մեծ հաւ պիտի ու գեր:-
Սիրոն ին աղուես, ազին՝ ծաղիկ:

Ով աղուեսակ, փոքրիկ գագան,
Ոտերըն կարճ ու խիստ վագան,
Շըներն ամէն քեզ զի հասան,
Սիրոն ին աղուես, ազին՝ ծաղիկ:

Աղուեսն հագեր լուրջ ու դեղին,
Ի շուրջ կու գայ բոլոր գեղին,
Աչք է դրել մամկայ եղին.
Սիրոն ին աղուես, ազին՝ ծաղիկ:

Աղուեսն նստեր քարին անխօս.
-Ուսայ, եղայ մարմնովս պիրոս.
Բնձ կու պիտի կարմիր խօրօս:-
Սիրոն ին աղուես, ազին՝ ծաղիկ:

Աղուեսն հագեր քուրքով մուշտակ.
-Ուսայ, եղայ մարմնով հրեշտակ,
Բնձ կու պիտի ժամու շուշտակ:-
Սիրոն ին աղուես, ազին՝ ծաղիկ:

Աղուես նստեր վերայ դիզին,
Ջագին կըռեր վերայ վիզին,
Աչք է դրել մամկայ ընկզին.
Սիրոն ին աղուես, ազին՝ ծաղիկ:

Աղուեսն ասաց վարդապետին.
-Չքեզ տի հանեմ վերայ փայտին,
Անցուցանեմ այն դին գետին:-

³³ Похлебкин В. Словарь международной символики и эмблема-тики. Лиса-лисица, N 123- (www.gumer.info/bibliotek-buks/culture).

³⁴ Մատենադարան, ձեռագիր N 7717, թ. 2008 ր:

³⁵ Մնացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956, էջ 379-380:

Միրոն աղուես, ազին՝ ծաղիկ³⁶:

Աս. Մնացականյանը գրում է. «Ուշագրավ է հատկապես «ազին ծաղիկ» դարձվածքը: Մա լոկ մի բանաստեղծական արտահայտություն չէ, որտեղ աղվեսի պոչը համեմատված լիներ ծաղիկի հետ: Այստեղ... պիտի փնտրել գաղափարական իմաստային հիմքեր: «Ազին ծաղիկ» կամ «ծաղիկ պոչ» հասկացությունը, իրոք, հնում ունեցել է իր հատուկ բովանդակությունը³⁷: Աճառյանը, ստուգաբանելով «ազի» բառը, հղում է Տաթևացուն (հարց. 371). «ազատ՝ անդամը կտրած», որից երևում է, թե ազի նշանակում էր նաև «առնի» (առնանդամ), ինչպես է և «պոչ»³⁸: Միջնադարյան ժողովրդական այս երգում³⁹ «Օտղած պոչից» գատ ուշագրավ են «աղուեսն հագեր լուրջ ու դեղին» և «աղուեսն հագեր քուրքով մուշտակ» դարձվածքները. ակնհայտ է, որ խոսքը ոչ թե իրական աղվեսի մասին է, այլ «աղվեսի մորթիով» ծպտված մեկի, որն ուներ արտոնություններ և, օգտվելով «պաշտոնից», պահանջում էր իրեն հասանելի «մեծ ու գեր հավր», «կարմիր խորոսը», մամիկի «եղն ու ընկույզը», «ժամու շուշտակը»: Վերջին պարզևր՝ շուշտակը, որն ունի տարբեր նշանակություններ (հարսի գլխաշոր, երկար պոչով կանացի թաշկինակ – լաթ, լուսնի մահիկի նման կանացի գդակ), օգտագործվում է նաև «...քահանայ, որ այրիանալուց յետոյ կուսակրօն հոգևորական է դառնում»⁴⁰ իմաստով: Հարսանեկան ծեսի որոշակի պահերին «աղվես աղբոր» հիրավի հանդուգն պահվածքը կարող էր բոլոր սահմաններն անցնել, սակայն մնալով «անպատիժ»:

Արևելքում մեծ ճանաչում վայելող ստվերների տիկնիկային թատրոն «Ղարագյոզն» ունեցել է ծիսական նշանակություն և կապվել մեռնող ու հարություն առնող աստվածության պաշտամունքի հետ⁴¹: «Ղարագյոզն» իր ավանդույթները ժառանգել է անտիկ միմոսների և հայկական գուսանների արվեստից: Նրա բեմական կարևորագույն հատկանիշներից էր շան գլուխը՝ արալեզր, որը, ինչպես հայտնի է, հազարամյակներ շարունակ եղել է միայն հին հայկական թատրոնի խորհրդանիշը⁴²:

³⁶ Առաջին անգամ տպագրվել է Կոստանյան Գ., Նոր ժողովածու, Ա պրակ, Թիֆլիս, 1892, էջ 45-46:

³⁷ Մնացականյան Ա., նշվ. աշխ., Ե., 1955, էջ 266:

³⁸ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. I, Ե., 1971, էջ 77:

³⁹ Մենք ոչ մի կասկած չունենք, որ այս տաղը ունեցել է հատուկ մեղեդի և երգվել է: Այդ են վկայում ինչպես եռատող հանգավորված տները, այնպես էլ «Միրոն աղուես, ազին՝ ծաղիկ» կայուն հիմնատող կրկնակը:

⁴⁰ Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944, էջ 536:

⁴¹ Петросян Э. Боги и ритуалы Древней Армении, Ե., 2004, с. 189-208.

⁴² Гоян Г. Театр средневековой Армении, т. 2, М., 1952, с. 371.

«Ղարագյոզի» գլխավոր հերոսներից մեկը Աղվես աղան էր՝ Տիլկի էֆենդին, որը շեշտում էր նրա **հայ լինելը** (образ армянина)⁴³:

Մեր հին ձեռագրերում, ինչպես նաև մանրանկարչության մեջ մեծ ուշադրության է արժանի «Ծաղկած աղվեսի» կերպարը, որն ուղղակիորեն առնչվում է պտղաբերության հետ, այդ իսկ պատճառով բուսական ոճավորում ստանում: Մի շարք ձեռագրերում լուսանցազարդերը ծաղկելիս պատկերված են աղվեսներ, պոչերին հատուկ «ուժ» վերագրված՝ ծաղկած-կանաչած տերևի և պտուղի վերածված: Այս առումով չափազանց ուշագրավ է **«ձեռ»** բառի դիտարկումը, որն ունի երկու իմաստ. 1 – **մազոտ պոչ կենդանիների** (ինչպես շան, աղուէսի, առիւծի նն), 2 – **առնի անդամ**⁴⁴: Աճառյանը «**ձեռք**» բնիկ հայկական բառ է համարում, նշելով, որ ավելի հնում այն կիրառվել է «**ցետ**» ձևով⁴⁵: Հավանաբար առավել վաղ շրջանի աստվածաշնչային թարգմանության մեջ «ագիի» փոխարեն օգտագործվել է «ցետ» բառը, քանզի Սամսոնի հետ կապված վերը հիշատակված պատմությունը Մխիթարյանները հղել են «ցետ»-ով. «Կապեաց գնոսա ընդ միմեանցս ցետ ընդ ցետ, և եղ զգահն՝ ի մէջ երկուց ցետոյն»⁴⁶: Ի դեպ, վկայություններ կան այն մասին, որ «երկու աղվեսների պոչերը իրար հանգուցել և միջև վառվող ջահ տեղադրելու» սովորույթը հին հռոմեացիների սիրելի զվարճանքներից է եղել⁴⁷:

Այսպիսով, հնագույն պատկերացումների համաձայն, պտղաբերության խորհուրդը սերտորեն կապված է եղել պոչի հետ, և այս առումով հարսանեկան ծեսում **աղվեսի** հանդես գալը, որպես **հարս բերող գլխավոր ուժ**, խոր արմատներ ունեցող մի հնամենի սովորույթ էր: Հարսանիքում, ունենալով կարևոր դեր ու նշանակություն, աղվես աղբերը, այնուամենայնիվ, հանդես էր գալիս որպես կատակային կերպար, և, ծեսի դրամատուրգիական կառուցվածքի համաձայն, այդ ֆունկցիոնալ անձը պետք է որ ունենար **երաժշտական բնութագիր**: Սակայն վկայություններն այն մասին, որ **աղվես աղբերն** ուղեկցվել է հատուկ գովական երգերով, մեր ազգագրական աղբյուրներում, ինչպես նաև երաժշտական ժողովածուներում խիստ սակավ են:

⁴³ Գուսանների ձեռքի խեղկատակային մականը (шутовской жезл) շնագլուխ օձ էր (псоглавая змея), որը հետագայում «վերածվեց» շնագլուխ առնանդամի (псоглавий фаллос): Այդ «գավազանը» Ղարագյոզի անկապտելի խորհրդանիշն էր, ինչպես Հերակլեսի լախտը (палица Геракла):

⁴⁴ Մալխասեանց Մ., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944, էջ 170:

⁴⁵ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977, էջ 150:

⁴⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Ե., 1981, էջ 154:

⁴⁷ Библейская энциклопедия, М., 1990, с. 434 (Труд Архимандрита Никифора, М., 1891).

Աղվես աղբոր մասին մի ուշագրավ երգ են պահպանել համշենահայերը, որն իր տեսակում եզակի նմուշ է⁴⁸:

Հայկական ժողովրդական երգաստեղծության մեջ «պարոն աղվեսին» կամ «Աղվես աղային» նվիրված երգերը քիչ չեն, սակայն, ժանրային դասավորյալ ցանկում, նրանց մի մասը զետեղված է կատակերգերի, իսկ մյուս մասը՝ պարերգերի բաժիններում, ինչպես նաև կան օրինակներ, որոնք տեղ են գտել մանկական երգերում: Ժանրային դասակարգումից անկախ՝ այդ բոլոր երգերի բովանդակությունը նույնն է, և աղվեսը «մեկնաբանվում է» որպես սովորական կենցաղային գազան՝ հավերին ուտող կենդանի, այլ ոչ թե որպես հարսանեկան «պաշտոնյա»՝ **աղվես աղբեր**: «Աղվեսի» երգի տեքստային գրառումների տարբերակները զետեղված են Գևորգ Շերենցի «Վանա սագ»⁴⁹, Արիստակես Վարդ. Տ. Սարգսեանցի «Պանդուխտ վանեցին»⁵⁰, ինչպես նաև Հայկ Աճեմյանի «Ծաղկաքաղ Վասպուրականի բանահիւսութեան»⁵¹ գրքերում: Միջնադարյան ձեռագրերում պահպանված «Աղվեսագովքերի» տեքստերն ուսումնասիրելով՝ Մնացականյանը ամենավաղ գրառված (թեկուզ և թերի) տարբերակներից առանձնացնում է N 1661 Ձեռագրում հիշատակված տողերը⁵².

Զիս էք պահեր դուք երերուն,
Միրուն... /սղված է/:
Աղուեսակ, փոքրիկ գազան,
Ոտներըդ կարճ ու խիստ վազան,
Շրներն ամեն քեզ չի հասան,
Միրուն աղ.. /սղված է/:

Ապա ավելացնում է. «... հիմք կա պնդելու, որ այս երգի ծագումն էլ ընկած է XVI-XVII դարերից առաջ»⁵³:

Եթե հարսանեկան երգերում **աղվես աղբոր** մասին «հիշատակումներ» գրեթե չեն պահպանվել, ապա կատակերգերի ժանրում աղվեսին նվիրված երգեր հաճախ են հանդիպում: Մեր այս ուսումնասիրության հիմնական խնդիրներից մեկն է պարզել, թե արդյոք մեզ հասած երգիծական երգերում այդքան հաճախ հանդես եկող «հավ

⁴⁸ Գրի է առել Հարություն Գալայճյանը, ցավոք՝ միայն տեքստը: Զետեղված է «Հարսանեկան երգեր» բաժնում, Չայն համշենական, Ե., 1971, էջ 69-70:

⁴⁹ Շերենց Գ., Վանայ սագ. Հուլիանոս (Տեղական բարբառով), Ա., Թիֆլիս, 1885, էջ 27:

⁵⁰ Արիստակես Վարդ. Տ. Սարգսեանց, Պանդուխտ վանեցին, 1876, էջ 110:

⁵¹ Աճեմյան Հ., Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան, Ս. Էջմիածին, 1917, էջ 57-58:

⁵² Մատենադարան, Ձեռագիր N 1661, թերթ՝ 389 ա, ժամանակ՝ 1594 թ.:

⁵³ Մնացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956, էջ 607:

գողացող աղվեսը» նույն **հարսանեկան աղվես աղբերը** չէ՞: Մենք չենք կարծում, որ կենցաղային «աղվեսին» կարող էր այդքան կարևոր «դեր» հատկացվել, ինչպես նաև քիչ հավանական է, որ այդ «հավագողին» ժողովուրդը դարեր շարունակ մեծարեր և ավանդական գովքեր նվիրաբերեր⁵⁴: «Աղվեսագովքերում» բանաստեղծական տեքստի **տիպական մտածողությունը** թույլ է տալիս խոսել այդ երգերի ավանդականության մասին, և այս դեպքում դիտարկել ոչ թե **կենցաղային** կատակերգի, այլ **ծիսական** կատակերգի շրջանակներում:

Աղվեսին նվիրված երգեր հետամուտ կերպով հավաքել է Կոմիտասը, սակայն ժանրային դասակարգում այդպես էլ չի կատարել⁵⁵: Ըստ էության, դրանք նույն երգի տարբերակներ են չնչին խմբագրական զանազանումներով, որի ամբողջական տեքստը զետեղված է «Հազար ու մի խաղում»⁵⁶: Աղվեսի մասին ուշագրավ օրինակ ենք գտնում «Շիրակի երգերում»⁵⁷, որի ամբողջական տեքստը դեռևս պահպանված է եղել ձեռագիր մատյաններում:

XIX դ. 70-ականներին ժողովրդից գրի առնվեց «Աղվսու խորտիկ» վերնագրով երգը (առանց մեղեդիի)⁵⁸, իսկ մեկ դար անց հաջողվեց ձայնագրել այդ «կատակերգի» մեղեդին⁵⁹: Հավելենք նաև, որ հավագող **աղվես աղբոր** մասին հարսանեկան կատակերգերը տարածում են ունեցել նաև պարսկահայոց մեջ⁶⁰:

Ահա նման օրինակների մասին է, որ անհրաժեշտություն է դառնում խոսել ավանդականության մասին՝ այն ավանդականության, որը կրում է ծեսը: Մենք բոլորովին չենք ժխտում «Աղվեսի» գովքերին բնորոշ կատակայնությունն ու պարայնությունը, ինչը թույլ է տվել այդ երգերից մի քանիսն ընդգրկել կատակերգերի և պարերգերի բաժիններ: Սակայն պետք է հիշել, որ «աղվեսագովքերը» կենցաղային կատակերգեր չեն, այլ **ծիսական**, և միայն ծեսի շրջանակներում կարող էր պահպանվել այն ավանդականությունը, որը դարեր շարունակ փոխանցվել է սերնդեսերունդ: Այսպիսով, «աղվեսագովքերը» իրավացիորեն պետք է դասել «Հարսնիսի կատակներ»

⁵⁴ Ավանդական ասելով, նկատի ունենք ժողովրդական երգաստեղծության մեջ աղվեսին նվիրված որոշ գովական կատակերգերում կայուն մեղեդային զծի և բանաստեղծական խոսքի առկայությունը:

⁵⁵ Կոմիտաս, ԵԺ, 11 հ., Ե., 2000, N 55, էջ 40; Կոմիտաս, ԵԺ, 13 հ., Ե., 2004, N 157, էջ 143; Կոմիտաս, ԵԺ, 5 հ., Ե., 1979, N 88, էջ 153:

⁵⁶ Հազար ու մի խաղ, Ժողովրդական երգարան, I տասնեակ, խմբ.՝ Կոմիտաս Վարդապետ և Մ. Աբեղեան, Վաղարշապատ, 1904, N 46, էջ 55:

⁵⁷ Մելիքեան Ս., Տեր-Ղևոնդեան Ա., Շիրակի երգեր, 1 հ., Թիֆլիս, 1917, N 115, էջ 55:

⁵⁸ Արիստակես վարդ. Տ. Մարգսեանց, Պանդուխտ վանեցին, էջ 110:

⁵⁹ Հայրենի երգեր, Ե., 2007, N 81, էջ 103: Հայրիկ Մուրադյանի ձայնից գրառեց և վերծանեց Ալինա Փահլևանյանը:

⁶⁰ Գիրակոսեան Ա., Իրանի Սպահանի շրջ. Փերիա գաւ. Ժողովրդական եւ աշուղական երգերի ընտրանի, Փասատենե, (California), 1996, N 31, էջ 68-69: Կատ.՝ Միլոն Օղլի:

շարքին և դիտարկել նրա ծիսական հարսանեկան կատակերգ՝ նվիրված հարսանիքի կարևոր դերակատար-պաշտոնյա «աղվես աղբոր»:

ОТРАЖЕНИЕ ДРЕВНЕЙШИХ КОРНЕЙ ТОТЕМА «ЛИСЫ» В АРМЯНСКОМ СВАДЕБНОМ ОБРЯДЕ

ТИГРАНЯН М. А.

Резюме

В традиционной армянской свадьбе весьма интересным был образ «брата-лиса». Этот изворотливый, ловкий, остроумный молодой человек обычно являлся одним из дружков жениха. Еще до прихода самих сватов «лис» должен был успеть незаметно пробраться в «стан» невесты (дом, деревню) и первым огласить благую весть о предстоящей свадьбе. При успешном выполнении своей роли лиса щедро вознаграждали.

В тотемических представлениях народов Древнего Востока лиса՝ издревле считалась символом плодородия и ей – в особенности ее хвосту – были посвящены специальные праздники, мистерии и магические ритуалы. В христианскую эпоху лису церковь объявила антихристианским животным, исключив из числа богоугодных тварей.

THE REFLECTION OF ANCIENT ROOTS OF "FOX" TOTEM IN ARMENIAN WEDDING CEREMONY

M. TIGRANYAN

Abstract

The role of "brother-fox" at traditional Armenian weddings was of great interest. This astute, nimble and witty young man who was normally elected from the groomsmen would have to sneak into the "camp" of the bride – the house or village she lived in – before the arrival of the in-laws to formally announce the upcoming nuptials. The "fox" was generously rewarded following successful completion of the job.

Foxes had been seen as a totemic emblem of fertility by the peoples of the Ancient East since the beginning of time. Unique celebrations, elaborate rituals and mystery-plays were regularly performed in the name of this ingenious animal of nature – its tail in particular. In the Christian Era, however, fox was "credited" by the church with numerous negative qualities and, as an anti-Christian living being, was promptly downgraded to the ranks of ungodly creatures.